

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 66/1

12 դեկտեմբերի 2017թ.

Քննարկվեց «ԲՐԱԲԻՈՆ ՖԼՈՐԱ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 26.10.2017թ. N1012581 ակտի դեմ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 30.06.2017թ. N1012581 հանձնարարագրի համաձայն «ԲՐԱԲԻՈՆ ՖԼՈՐԱ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև՝ ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 26.10.2017թ. N1012581 ակտը, որով լրացուցիչ վճարման է առաջադրվել ընդամենը 10.838.630 դրամ:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ ընկերության կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 26.10.2017թ. N1012581 ակտը վերադասության կարգով գանգատարկվելուց բացի, ակտի դեմ հայցադիմում է ներկայացվել նաև ՀՀ վարչական դատարան:

ՀՀ վարչական դատարանի 04.12.2017թ. որոշման համաձայն (վարչական գործ թիվ ՎԴ/12901/05/17) «Բրաբիոն Ֆլորա սերվիս» ՍՊԸ հայցադիմումն ընդդեմ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 26.10.2017թ. N1012581 ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունվել է վարույթ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետի՝ դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դատարանի վարույթում գտնվում է միևնույն անձանց միջև, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով գործ:

Նույն օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե ակտը բողոքարկվել է վարչական և դատական կարգով միաժամանակ, ապա բողոքը ենթակա է դատական քննության, որի դեպքում վարչական մարմնում հարուցված վարույթը կարճվում է:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ «ԲՐԱԲԻՈՆ ՖԼՈՐԱ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

«ԲՐԱԲԻՈՆ ՖԼՈՐԱ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կարճել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչության մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ